Երանելիները

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՆՅՈՒԹ

Հղում	Հատկանիշ
Մատթեոս 5.3, 3 Նեփի 12.3	**Հոգով աղքատ** Լինել խոնարհ կամ «երախտագիտությամբ ընդունել ձեր կախվածությունը Տիրոջից, հասկանալ, որ դուք անընդհատ Նրա օգնության կարիքն ունեք: Հեզություն նշանակում է գիտակցում, որ մեր տաղանդներն ու ունակությունները պարգևներ են Աստծուց» (Ավետարանական թեմաներ, «Հեզություն», topics.ChurchofJesusChrist.org):
Մատթեոս 5.4	**Սգալ** Որևէ բանի համար վիշտ ապրել: Անձը կարող է սգալ սեփական կամ ուրիշների մահկանացու կյանքի փորձությունների համար: Անձը կարող է սգալ նաև մեղքի վշտի պատճառով:
Մատթեոս 5.5	**Հեզ** «Աստվածավախ, արդար, խոնարհ, ընկալունակ և տանջանքների հանդեպ համբերատար» լինել [Սուրբ գրքերի ուղեցույց, «Հեզ, Հեզություն», scriptures.ChurchofJesusChrist.org]: Նրանք, ովքեր ունեն այդ հատկանիշները, պատրաստակամ են հետևել Հիսուս Քրիստոսին, և նրանց բնավորությունը հանգիստ է, հլու, հանդուրժող և ենթարկվող (Ուլիսես Սոարես, «Եղեք հեզ ու սրտով խոնարհ», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2013, 9):
Մատթեոս 5.6, 3 Նեփի 12.6	**Արդարության քաղց ու ծարավ** Աստծո կամքն իմանալու և ըստ դրա գործելու մեծ ցանկություն ունենալ:
Մատթեոս 5.7	**Ողորմած** «Կարեկցող, հարգալից, ներողամիտ, բարեսիրտ և համբերատար լինել, նույնիսկ, եթե մենք տեղյակ ենք ուրիշների թերությունների մասին» (Ավետարանական թեմաներ, «Ողորմություն», topics.ChurchofJesusChrist.org):
Մատթեոս 5.8	**Սրտով մաքուր** Սրտով մաքուրները նրանք են, «ովքեր սիրում են Տիրոջը, ովքեր ձգտում են հետևել Նրան և պահել Նրա պատվիրանները, ովքեր ձգտում են ապրել առաքինի կյանքով և հավատարմությամբ դիմանալ մինչև վերջ: Սրտով մաքուրները նրանք են, ովքեր վերահսկում են իրենց մտքերը և իրենց զերծ են պահում անբարոյական երևակայություններից ու արարքներից» (Շելդոն Ֆ. Չայլդ, «Հիսուսի Խոսքերը. Մաքրաբարոյությունը», *Ensign* կամ *Լիահոնա*, հունվար 2003, 44):
Մատթեոս 5.9	**Խաղաղարար** «Մարդկանց ընդհանուր հիմք գտնելու հարցում օգնելու պարգևն է, մինչ ուրիշները միայն տարաձայնություններ են տեսնում» (Հենրի Բ. Այրինգ, «Սովորել քահանայությունում» *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2011, 63):
Մատթեոս 5.10-12	**Արդարության համար հալածվող** Հնազանդվել և պաշտպանել Հիսուս Քրիստոսին և Նրա ուսմունքները, նույնիսկ, եթե դրա համար մեզ ծաղրեն կամ վատ վարվեն մեզ հետ:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *The Beatitudes*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.